# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***«ՍՏԵՓՁՈՐ -1» ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի Ստեփանավան համայնքում «Ձքնաղ-1» փիէկի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի՝ 2026 թվականի հունիսի 9-ին՝ ժամը 11:30-ին Ստեփանավանի համայնքապետարանում և 12:30-ին Ուրասար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ի կողմից «Ձքնաղ-1» փիէկի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի ներկայացուցիչները, Ստեփանավանի համայնքապետարանի և Ուրասար բնակավայրի աշխատակիցները, ազդակիր բնակավայրերի բնակիչները և շահագրգիռ հանրությունը:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի «ժա». ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքննվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների, աղմուկի, թորթման՝ գետի ջրի և այլն: Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնողին և՝ խնդրեց մանրամասն ներկայացնել նախատեսվող գործունեությունը, և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ազդեցությունների նվազեցման միջոցառումները և նախատեսվող մշտադիտարկումները:

**Ներկայացուցիչ** ներկայացավ և ներկայացրեց նախատեսվող աշխատանքները, ծավալները, ծանոթացրեց նախագծին և դրա իրականացման կարևորությունը, գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, ինչպես նաև համայնքում սոցիալական ազդեցությունը և ստեղծվող աշխատատեղերը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց տարածքի անտառապատ հատվածներ հատվող ծառերի գետի հունի պահպանման և այլնի վերաբերյալ:

**Նախաձեռնողը** պատասխանեց որ փիէկի խողովակները անցնելու են գրեթե 7 կմ տարածք գետից կողքով և որոշ հատվածներում անցնելու են անտառի տարածքով, որը պատկանում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ կտրվելու են թվով 60 ծառ որի դիմաց կիրականացվի տարածքում ծառատնկում, ինչճպես նաև համայնքի կողմից հատկացված վայրերում: Կքնքվի պայմանագիր լիազոր մարմնի հետ, և փոխհատուցում կիրականացվի օրենքով սահմանված:

**Համայնքապետարանի ներկայացուցիչները** հետաքրքրվեցին սոցիլական ծրագրերից և հավելեցին որ ամեն բնակավայրի տարածքից ներառել աշխատակիցներ և տեխնիկա թե շինարարության և թե շահագործման ընթացքում:

**Նախաձեռնողը** պատասխանեց որ այո այդպես էլ լինելու է քանի որ տնտեսապես շահավետ չի լինի այլ տարածքից բերել:

Գգործունեությունը մասնակիցների կողմից արժանացավ հավանության:

Այլ հարցեր չինչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ֆրունզիկյան

«ՍՏԵՓԶՈՐ-1» ՍՊԸ-ի տնօրեն/ներկայացուցիչ՝ Վ. Հարությունյան